



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

408


Լ. ՅՈՒՍԵՈՅ

ՄԱՐԴՈՒՄ ԶԱՆՏ ՀՈՂ Է ՀԱՐԿԱԽՈՐ



Ռուս. քարզմ.

ՎՐԹԱՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄՈՎՍԻՍԵԱՆ



Վ.Ա.ՂԱՐՇԱ.ՊԱՅ

ՏՊԱՐԱԿ. ԻՍՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱՆԻ

1903

891.71
Ն. 80

391.71

S-80

Լ. ՏՈՒՍՈՑ

25 NOV 2010

պր.

ՄԱՐԴՈՒՄ ԶԱՆՑ ՀՈՂ Է ՀԱՐԿԱԽՈՐ



Արտատպուած է 1903 թ. Ապրիլ «ԱՐԱՐԱՏ»-ից

ՀԱՅԿԻՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Ռուս. քարզմ.

ՎՐԹԱՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՄՈՎՍԻՍԵԱՆ



Վ.Ա.ՎԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ

1903

23 MAY 1903

Дозволено цензурою 10 Мая 1903 г. г. Тифлисъ



4734-55

ՄԱՐԴՈՒՄ ՇԱՑ ՀՈՂ Է ՀԱՐԿԱՒՈՐ.

Ա.

Քաղաքից մեծ քոյրը փոքր քրոջ մօտ դիւղ է գալիս: Մեծ քոյրը քաղաքում վաճառականի հետ էր ամուսնացել, իսկ կրտսերը դիւղում՝ մի դիւղացու հետ: Քոյրերը թէյ են խմում իրար հետ, խօսքի բռնուում: Մեծ քոյրը սկսում է պարծենալ ու իւր քաղաքի կեանքը գովել, թէ ինչպէս նա քաղաքում աղատ և մաքուր ապրում է, ման է գալիս, ինչպէս զարգարում է իւր երեխաներին, ինչպէս քաղցրուենիք է ուտում և խմում, ինչպէս կառքով կամ ոտքով շրջում է ու զբօսնում և թատրոն գնում:

Կրտսեր քոյրը վերաւորուում է. նա էլ սկսում է իւր հերթին վաճառականի կեանքը նուատացնել, իսկ իւր գեղջկականը բարձրացնել:

— Չեմ փոխի, ատում է, իմ կեանքը բոնի հետ: Թէև անդոյն ենք անցկացնում օրներս, բայց քաշուելու բան չունինք: Ճիշտ է, դուք աւելի մաքուր էք ապրում, բայց ծայրահեղութեանց ենթակայ էք. կամ շատ էք շահուում, կամ բոլոր

բովին սնանկանում էք: Առաին ասում է. հարստանալն ու աղքատանալն եղբայր են: Պատահում է, այսօրուայ հարուստը վաղը լուսամուտներն առաջ մուրացկանութիւն է անում: Իսկ մեր գիւղական կեանքն աւելի հաստատուն է, գիւղացու կաշին հաստ է. թէ հարուստ չենք, հօկուշտ ենք:

Մեծ քոյրը պատասխանում է. — Վուշտս ո՞րն է. խողերն ու հորթերն էլ կուշտ են լինում: Չկայ ոչ մօքրութիւն, ոչ մարդավարի կեանք: Ինչքան ուզում է թող մարդ չարչարուելի այդպէս աղբի մէջ էք ապրելու, մեռնելու, նոյնը և որդիներդ: — Ի՞նչ անենք, ասում է կրտսերը, մեր դործն է այդպէս: Գորա փօխարէն էլ ապրուստի հաստատ աղբիւր ունենք, գլուխ չենք ծռում ոչ ոքի առաջ, ոչ ոքից չենք վախենում: Իսկ դուք քաղաքում ենթակայ էք զանազան հրապոյրների. այսօր է, բայց վաղը բանն ուրիշ է դառնում: Մէկ էլ տեսնես, մարդուդ դայթակղեցնում է կամ թղթակաղը, կամ գինին, կամ որ և է գողութիւն: Եւ ամէն բան կորած է: Մի՞թէ այդպիսի գէպեր չեն պատահում:

Հանաէր Պախտմը, վառարանի մօտ նստած, ակամջ էր գնում կանանց դատարկաբանութիւններին: «Ճշմարիտ է, ասում է իւր մտքում Պախտմը, ճշմարիտ որ մենք գիւղացիներս մանկութիւնից մայր հողի հետ գործ ունենալով, յիմար բա-

ներ մաքներս չենք էլ բերում: Մի բանը վատ է—հողը քիչ է: Աւգածիս չափ թէ հող կունենանք, էլ ոչ ոքից, նոյն խախտաանայից չէի վախենալ:

Վնանըք թէյը վերջացրին, զարգարանքները մասին էլ դիւններից երկար ու բարակ դուրս տուին, աման—չաման հաւաքեցին, պառկեցին քնելու:

Իսկ սատանան, վառարանի ետեւում նըստած, ամէն բան լսում էր: Նա ուրախացել էր, որ գիւղացու կինը իւր ամուսնուն զլուխը գովալու էր արամաղբել: Պախտմը պարծեցել էր, որ եթէ նա որքան ուզում է հող ունենար, սատանան էլ նրան բան անել չէր կարող: — Լաւ, մտածում է սատանան, կը տեսնենք ո՞րս կը տանի. ես շատ հող կը տամ քեզ, հողով էլ քեզ կը յաղթեմ:

Բ.

Գիւղացիները կողքին ապրում էր մի շատ հարուստ տիկին: Նա 120 գեսեատին հող ունէր: Առաջ գիւղացիների հետ խաղաղ էր ապրում— չէր վերաւորում նրանց: Այդ ժամանակ պաշտօնաթող մի զինուոր նրա մօտ գործակատար մտաւ և սկսեց գիւղացիներին տուգանքի ենթարկել:

Պախտմբ արքան աշխատում էր: դարձեալ չէր ազատուում սուգանքից, որովհետեւ կամ նորա կովն էր տիկնոջ պարտէզն ընկնում, ձին դարին արածում, կամ հորթը մարդագետինը մտնում: Ամէն անգամ սուգանք էր վճարում խեղճ Պախտմբ:

Պախտմբ սուգանքը վճարում էր, և անեցւոց հայհոյում կամ ծեծում: Ամառն այդ գործակատարի երեսից Պախտմբ շատ անգամ յանցանքի մէջ ընկաւ: Աճռեց անասուններին տանը թողնել. թէև ավսոս էր դալիս կերին (խոտ, եմ), բայց դոնէ վախենալու պատճառ չէր ունենայ:

Չմեռը լաւ պատեց, սր տիկինը ծախում է հողը և մեծ ճանապարհի կողմի դռնապանը կամենում է այն գնել: Գիւղացիք լսեցին—ախքաշեցին: «Է՛, մտածում են, հողը դռնապանի ձեռքն է ընկնելու, տիկնոջից աւելի է տուգանքներով տանջելու: Առանց այդ հողի մենք չենք կարող ապրել. բոլորս էլ նորա շուրջն ենք բնակում»: Գիւղացիք հասարակութիւնով եկան տիկնոջ մօտ, սկսեցին խնդրել, որպէս զի հողը դռնապանին չը ծախէ, այլ իրենց տայ: Խոստանում էին աւելի վճարել: Տիկինը համաձայնեց, Գիւղացիք սկսեցին համախօսական կազմել, ամբողջ հասարակութիւնով գնել. մի անգամ, երկու անգամ փողով կազմեցին—գործը գլուխ չեկաւ: Սատանան լառնակութիւն էր ձգում: ոչ մի կերպ համաձայնութեան չէին գալիս: Գիւղացիք սրոշեցին՝ առան-

ձին առանձին, ով որքան միջոց ունի, գնի: Տիկինը դորան էլ համաձայնեց: Պախտմբ ականջն ընկաւ, սր հարեանը տիկնոջից 20 դեսետաին արդէն գնել է, և տիկինը դրամի կէս վճարը մի տարով յետաձգել է: Պախտմբ սկսում է նախանձել. «Ամբողջ հողը խլխլելու են, մտածում է ես դատարկածեռն եմ մնալու»: Կնոջ հետ խորհրդի է մտնում:

— Ուրիշները գնում են, հարկաւոր է, առում է, մենք էլ մի տասը դեսետաինի չամ գնենք: Թէ չէ ապրել անհնար է, գործակատարը տուգանքներով խեղդեց:

Մտածեցին, ինչպէ՞ս գնեն: Մի հարիւր բուրբուլ չափ հողեպահուստ ունէին, քուռակը ծախեցին, մեղուների կէսը, սրգուն էլ իբրև մշակ գրաւ դրին. մի բան յետոյ քենակալից վերցրեց, և դրամի կէսը դուրս եկաւ:

Պախտմբ դրսեց փողերը, ընտրեց հողը, 15 դեսետաին անտառակով, և տիկնոջ մօտ գնաց ասկարկելու: 15 դեսետաինի գինը կտրեց, ձեռք ձեռքի խփեցին, և դրաւական ներկայացրեց: Քաղաք գնացին, կալուածագիր կազմեցին, դրամի կէսը վճարեց, պարտաւորուեց մնացածն էլ երկու տարում տալ:

Պախտմբ հողի տէր դարձաւ: Սերմեր ձեռք բերեց, գնած հողը ցանեց, լաւ բուսաւ: Մի տարուայ մէջ տիկնոջ պարտքն էլ վճարեց, քենակա-

լինն էլ: Պախումը կալուածատէր էր դարձել: Իւր հողն էր հերկում և ցանում, իւր հողի խոտն էր քաղում, իւր հողի վերայ գանուած արմատները կարում և իւր հողի վերայ անասուն պահում: Պախումը դուրս է գալիս իւր սեպհական հողը մշակելու, կամ մարգագետինները նայելու — չի ուրախանում: Թուում է նրան, որ խոտը, ասենք, աճում է, բայց նրա վերայի ծաղիկները ծաղկում են բոլորովին ուրիշ կերպ: Պատահում էր, անցնում էր այդ հողով—հողին բան չունէր ասելու, հող էր, բայց այժմ բոլորովին ուրիշ բան էր դարձել:

Գ.

Պախումը այդպէս ապրում է, և գոհ է: Ամէն բան կարգի կրնինէր, միայն թէ գիւղացիք սկսել էին Պախումի հացաբոյսերն ու մարգագետինները կերցնել: Պատուաւոր կերպով խնդրեց, բայց անօգուտ դուրս եկաւ, չը զսպուեցին. երբեմն հօտաղներն էին եղները Պախումի մարգագետիններում արածեցնում, երբեմն գիշեր ժամանակ ձիերը ցոնի արտերի մէջ թողնում: Միշտ դուրս էր անում անասուններին, և բանի տեղ չէր դնում, դատաստանի չէր ղիմում. ապա ձանձրա-

ցաւ, սկսեց գիւղական դատարանին դանդառուել: Թէև իմանում էր, որ նեղուածքութիւնից են այդպէս անում գիւղացիք՝ ո՛չ թէ չարամտութեամբ, բայց մտածում է. «Դէ չի կարելի հօձեւքից տալ, այդպէս շարունակելու, նորա բոլորը կը կերցնեն: Պէտք է խրատել»:

Այդպէս դատաստանի միջոցով մի երկու անգամ մէկին, միւսին տուգանքի ենթարկեց: Գիւղացիք հարեանները սկսեցին սրտամայ լինել Պախումից, այս անգամ արդէն գիտամամբ էլ վնասում էին: Նոցանից մէկը գիշեր ժամանակ անտառակը մտաւ, տասի չափ լըրեններ կեղևահան արաւ: Պախումը անտառով անցնում էր, ատենում է, ի՛նչ որ սպիտակին է տալիս: Վօտեցաւ, կեղևները ցրուած ընկած են, կոճղները ցցուած: Գէթ անտառի ծայրերինը կտրէր, մէկը թողնէր, թէ չէ անսպիտանը հերթով բոլորը փչացրել է: Պախումը չարացաւ: «Ա՛խ, մտածում է, մի իմանայի, անողն ո՛վ է կղէտ. ես գիտէի, նրան ինչ ցոյց կը տայի»: Մտածեց, մտածեց, թէ ո՛վ կարող էր անել. «Էլ ոչ ոք, Սիմոնից դատ»: Սիմոնի բակը գնաց մի նշան փնտռելու, ոչինչ չը գտաւ, միայն հայհոյեցին միմեանց: Պախումն աւելի ևս համոզուեց, որ Սիմոնի արածն է: Գանդատ տուեց: Դատաստանի կանչեցին: Դատաւորները խորհեցին, խորհեցին—գիւղացուն արդարացրին. փառտեր չը կային: Պախումն աւելի ևս

վերաւորուեց. ամենուտէրի և դատաւորներն հետ
 կռուեց: «Ի ուրք, ասում է, գողեր էք պահում:
 Եթէ ինքներդ լաւ մարդիկ լինէիք, գողերին չէիք
 արգարացնի: Պախումն ընկաւ թէ դատաւորնե-
 րի և թէ հարեաններն հետ: Սխտեցին նրան սպառ-
 նալիքներ տալ: Պախումն այնուհետև որչափ իր
 հողում ազատ էր ապրում, աշխարհում ճշդուած
 էր: Այդ ժամանակ լուրեր պտտեցին, թէ ժո-
 ղովորդից ոմանք նոր տեղեր են անցնում: Պա-
 խումը մտածում է. «Իսկապէս ասած, ես կարիք
 չունիմ իմ հողիցս հեռանալու այ եթէ մերոնե-
 ցից մէկն ու մէկը դնալու լինէր, մեր տեղը
 կը լայնանար: Նրա հողը ես կը վերցնէի իմ վերայ,
 շուրջս կընդարձակէի, ապրուստս աւելի կը լա-
 ւացնէի: Թէ չէ սատարիկ նեղուածք է»:

Պախումը մի անգամ տանը նստած էր. մըտ-
 նում է նրա մօտ մի ճամբորդ գիւղացի: Գիւղա-
 ցուն գիշերելու տեղ տուին, կերակրեցին, մի-
 մեանց հետ խօսքի բռնուեցին. — Յառաջ բարի,
 հարցրեց Պախումը: Գիւղացին ասում է, որ ցա-
 ծից, Վոլգի այն երեսից է գալիս. այնտեղ մշա-
 կութիւն էր անում: Խօսք խօսքի ետեւից, գիւ-
 ղացին հետզհետէ պատմում է, թէ ինչպէս է ժո-
 ղովորդն այդտեղ նոր բնակութիւններ հաստա-
 տում: Պատմում է, որ այնտեղ բնակուեցին իւր
 հայրենակիցներից ոմանք, հասարակութեան ան-
 դամ գրուեցին, և մարդ զլուխ 10 դեսեատին

հողաբաժին ստացան: Իսկ, ասում է, հողն այն-
 բան պարարտ է, որ ցանած հաճաքը ցորենի նման
 էր բարձրացել, — ձին մէջը կորչում էր, և այնքան
 խիտ, որ հինգ փունջը մի խուրձ էր կազմում:
 Մէկ գիւղացի, պատմում է ճամբորդը, բոլորովին
 աղքատ, ձեռքերը թափ տալով եկաւ, բայց այ-
 ժրմ վեց ձիու և երկու կովի տէր է դարձել:

Պախումի սիրտը թնդաց, Մտածում է. ինչու
 այս նեղուածք տեղում աղքատ ապրեմ, եթէ լաւ
 ապրելու հնարաւորութիւն կայ: Ծախեմ հողս
 էլ, ունեցած — չունեցածս էլ. այդ փողերով ես
 այնտեղ կարգի կը դնեմ գործերս, տուն ու տեղ
 կը հիմնեմ: Իսկ այստեղ, այս նեղ դրութեան
 մէջ, աշխատանք անելն էլ մեղք է: Միայն նա-
 խապէս մի իմանամ բանն ինչումն է:

Պատրաստուեց ամառը, զնաց: Հողեկնա-
 ւով Վոլգայի վերայ նաւելով հասաւ Սամարա,
 սպա ոտքով դնաց 400 վերստ, նշանակած տեղը
 հասաւ: Ամէն բան պատմածի նման էր: Գիւ-
 ղացիք ազատօրէն ապրում են, ամէն մէկին 10
 դեսեատին հողաբաժին է արուած, և սիրով են
 ընդունում իրանց հասարակութեան մէջ: Իսկ
 եթէ մէկը փող էլ ունի, բացի հողաբաժնից, իւր-
 րե յաւիտենական սեպհականութիւն, որքան կա-
 մենայ կարող է դնել ամենալաւ հողի դեսեատինը
 3 բուրլիով. ո՛րքան կամենաս, կարելի է ձեռք
 բերել:

Պախտովն ամէն բան տեղն ու տեղը խմացաւ, աշնան դէմ վերագարձաւ տուն, սկսեց ամէն ինչ ծախել: Ծախեց օգուտով իւր հողը, ծախեց անասնեղէնները, անտեսութեան վերաբերեալ բոլոր իրերը, հասարակութիւնից դուրս եկաւ, մինչև դարուն մնաց և ընտանիքն առած նոր տեղերը դնաց:

Դ.

Պախտովը ընտանիքով նոր տեղերն եկաւ, մի մեծ գիւղի հասարակութեան անդամ գրուեց: Ծերունիներին խմացրեց, անհրաժեշտ թղթերը կարգի դրեց: Պախտովին ընդունեցին, դանազան դաշտերում 5 հոգու համար 50 դեսետաին հողաբաժին տուին, բացի արօտատեղը: Պախտովը սարքուեց, սկսեց անասնեղէն պահել: Նրա այժմուայ իւրաքանչիւր հոգու հողաբաժինը առաջուանից երեք անգամ աւելի էր, հողը արգաւանդ: Վեցյաղավարութիւնը նախկինի համեմատութեամբ տասն անգամ աւելի լաւ էր: Վարելահող և արօտի տեղ որքան կամենաս: Իսկ անասուն որքան սիրող կուզի պահել:

Սկզբում, քանի որ նոր էր կարգի ընկնում և տեղաւորուում, Պախտովին լաւ էր թուում. հէնց

որ ընտանիքն այդ հողի վերայ էլ չէր ներուածք զգաց: Պախտովը հողաբաժնում առաջին անգամ ցորեն ցանեց, բերքը լաւ դուրս եկաւ: Ախորժակը շարժուեց նորից ցորեն ցանելու, բայց հողաբաժինը չէր բաւականացնում: Իսկ եղածն էլ անպէտք էր: Այն երկրում ցորենը ցելած հողում են ցանում: Ցանում են մի, երկու տարի, ապա անմշակ թողնում, մինչև նորից կը պարարտանայ հողը: Այդպիսի հողի էլ ուղողները շատ են լինում, ամէնքին չի բաւականացնում: Ահա այդ տեսակ պարկած հող ձեռք բերելու համար յաճախ կռիւներ էին լինում: Բաւելի հարուստները իրենք են կամենում ցանել, իսկ աղքատները հարկերի պատճառով վաճառականներին են յանձնում իրենց հողը: Պախտովը ուղեց աւելի ցանել: Միւս տարին մի վաճառականի մօտ դնաց, մի տարով հող վերցրեց: Աւելի ցանեց—բերքը լաւ դուրս եկաւ, բայց գիւղից հեռու էր ընկած, հարկաւոր էր 15 վերստից կրել: Տեսնում է, շրջակայքում վաճառական — գիւղացիք ազարակներում են ապրում, հարոտանում են:—«Ա՛յ, վատ չէր լինիլ, մտածում է Պախտովը, եթէ ես էլ յաւիտենական սեպհական հող դնէի, ազարակ չնէի: Ամէն բան մօտ կը լինէր»: Եւ Պախտովը սկսեց մտածել, ինչպէ՞ս յաջողեցնի սեպհական հող դնելը:

Այդպէս ապրեց Պախտովը երեք տարի: Հող էր վերցնում, ցորեն ցանում: Տարիները յաջող

էին դուրս գալիս, ցորնի բերքը լաւ էր լինում, և Պախոմի գրպանում աւելի դրամներ երևացին: Ապրելուն ապրում էր, բայց ձանձրալի էր թուում Պախոմին իւրաքանչիւր տարի ուրիշներէ մօտ գնալ, հող դնել, հողի երեսից ատանդական լինել, Հէնց որ մի տեղ լաւ հողի կտոր է երևում, գիւղացիք իսկոյն վրայ են թափուում, միմեանց ձեռքից խլելում. եթէ միջոց չունեցաւ ժամանակին ձեռք բերելու, ցանելու էլ տեղ չի ունենալ: Այդպէս երբորդ տարին վաճառականի հետ կիսովի դնեց գիւղացիներն արօժատեղը, հերկում էին արդէս, մէկ էլ տեսնես փոշմանեցին, պայմանները քանդեցին՝ որով ամէն աշխատութիւն կորաւ: — «Թէ իմ հողս կը լինէր, մտածում է Պախոմը, ոչ ոքի առաջ գլուխ չէի ծռի» և յանցանք էլ չէի ունենալ»:

Պախոմն սկսեց գէտ ու գէն ընկնել տեղեկանալու, ո՞րտեղ կարող է սեպհական հող գրտնել: Եւ մի գիւղացու հանդիպեց: Գիւղացին 500 դեսետաին դնել էր, յանկարծ սնանկանում է և արժան դնով ծախում: Պախոմը սկսեց նրա հետ բանադնացութեան մէջ մտնել: Այս կողմից, այն կողմից զիջելով—1500 բուբլու վերայ կանգ են առնում, միայն դրամի կէսը յետոյ տալու պայմանով: Գործն արդէն բոլորովին վերջացած էր, մէկ էլ տեսնես Պախոմի բախ է մտնում մի ճամբորդ վաճառական: Եկուողին կերակրում են, թէյ

տալիս, խօսում: Վաճառականը պատմում է, որ հեռաւոր բաշկիրցիներն երկրից է գալիս: Այնտեղ, ասում է, մօտ հինգ հազար դեսետաին հող է դնել, որը նորան նստել է ընդամէնը հազար բուբլի: Պախոմը հետաքրքրուեց, հարց ու փորձ արաւ: Վաճառականը պատմեց:—Միայն, ասում է, ծերունիներին մի կերպ գոհացրի, 100 բուբլու կապացու, կտորներ բաժանեցի, մի հակ էլ թէյ, իսկ խմողներին դինի վայելել տուի: Եւ դեսետաինը 20 կոպէկով վերցրի»: Աալուածագիրն էլ ցոյց է տալիս: «Գնած տեղս, ասում է, գետակի ափին է ընկած. ամբողջ տափաստանը պարարտ հող է ու խամս: Պախոմը սկսեց հարց ու փորձ անել, ինչպէս և ինչ տեսակ «Այնտեղի հողը, շարունակում է վաճառականը, ծայր չունի. նրա շուրջը մի տարումն էլ չես կարող պրտտել. բոլորը բաշկիրցուցն է: Ժողովուրդը սլխարի նման յիմար է: Համարեա ձրի կերպով կարելի է վերցնել»: — «Ե, մտածում է Պախոմը, ինչու 1500 բուբլի վճարեմ 500 դեսետաին հողի համար, դեռ պարտքն էլ վիզս փաթաթեմ: Իսկ այնտեղ 1000 բուբլով ինչքան հողի կը տիրանամ»:

Ե.

Պախումը հարց ու փորձ արաւ, թէ ինչպէս
 դնայ, և հէնց որ վաճառականին ճանապարհ դրեց,
 ինքն էլ պատրաստուեց դնալու: Տունը կնոջ
 յուսով թողեց, ինքը պատրաստութիւն տեսաւ
 և ծառայի հետ դնաց: Գնացին քաղաք, մի հակ
 թէյ դնեցին, վերցրին զանազան ընծաներ, դինի,
 ինչպէս որ վաճառականն էր արել: Գնացին, դնա-
 ցին, մօտ 500 վերստ դնացին: Եօթներորդ օրը
 հասան բաշկերցւոց վրաններին: Ամէն բան վաճա-
 ռականի ասածի նման էր: Ամէնքն էլ տափաս-
 տաններում են ապրում, գետակի ափին, թաղի-
 քէ վրաններում (կիրիտիաներում): Իրենք եր-
 կրագործու թեամբ չեն պարապում և հաց էլ չեն
 գործ ածում: Դաշտերում պտտում են անա-
 սունները և մի մի փայտի կտոր ոտներին կապած
 ձիաները: Վրաններ (կիրիտիաներ) ետևում
 կապուած են ջուռակները, և օրը երկու անգամ
 նոցա մօտ են թողնում մայրերին. մատակ ձիու
 կաթը կթում են, և նրանից կումիս պատրաստու մ:
 Պանայք կումիսը շարժելով պանիը են շինում, իսկ
 տղամարդիկ միայն իմանում են—կումիս և թէյ
 խմել, ոչխարի միտ ուտել և սրնդի վերայ ածել:
 Ամէնքն էլ տափակ, ուրախ մտրդիկ են, ամբողջ

ամառը պարսպ ժամանակ են անցնում: Բողորովին
 խաւար տղէտ ժողովուրդ են և ռուսերէն չեն
 իմանում, քայց հիւրասէր են:

Հէնց որ Պախումին տեսան, մէկը միւսի ետեւից
 բաշկերցիք դուրս եկան կիրիտիաներից, ամէն
 կողմից հիւրին շրջապատեցին: Թարգման էլ զբո-
 նուեց: Պախումը նրան ասաց, որ հողի համար է
 եկել: Բաշկերցիք ուրախացան, քաշ տուին Պա-
 խումին, մի լաւ կիրիտիա տարան, գորգի վերայ
 բազմեցրին, տակը բմբլէ բարձր դրին, նստեցին
 շուրջը, սկսեցին թէյով, կումիսով հիւրասիրել:
 Ոչխար մորթեցին և նրա մտով Պախումին կերակ-
 րեցին: Պախումը տարանտասի վրայից վերցրեց
 ընծաները, սկսեց բաշկերցւոց ընծայել: Այդպէս
 բոլորին ընծաներ տուեց և թէյը բաժանեց:
 Բաշկերցիք ուրախացան: Մըթմըթացին միմեանց
 մէջ, մըթմըթացին, ապա թարգմանին հրամայե-
 ցին ասել:

55
 234
 573
 4

— Հրամայում են ասել քեզ, սկսում է
 թարգմանը, որ դու դիւր ես եկել նրանց. բաշ-
 կերցիք սիրեցին քեզ, իսկ մենք մի այսպիսի սո-
 վորութիւն ունենք—հիւրին ամէն տեսակ բաւա-
 կանութիւն տալ և տուած ընծաների փոխարէն
 շնորհակալ անել: Դու մեզ պարգևներ շնորհեցիր,
 այժմ ասա, մեր երկրում ինչն է քեզ դիւր դա-
 ւիս, ինչ ես սիրում, որպէսզի քեզ տանք:

— Ինձ դիւր է



ամէնեկ աւելի ձեր հողը: Մեր երկրում, ասում է, հողին նեղութիւն կայ, իսկ դուք հող շատ ունէք և ձեր հողն էլ լաւն է: Այդպիսի հող ես կեանքումս չէի տեսած:

— Թարգմանը հաղորդեց: Բաշկերցիք նորից խօսեցին, խօսեցին: Պախումը չի հասկանում, ինչ են ասում, միայն նկատում է, որ ուրախ են, ինչ որ գորգոռում են և ծիծաղում: Ապա հանդարտեցին, Պախումի վերայ են նայում, իսկ Թարգմանը խօսում է: Հրամայում են, ասում է Թարգմանը՝ քեզ ասել, որ քո արած բարիքի փոխարէն, պատրաստ են քեզ որքան կամենաս, հող տալ: Միայն ձեռքի շարժումով ցոյց տուր որ կողմը,— քոնը կը լինի:

Մի քիչ էլ խօսեցին, ինչ որ պատճառով վէճի բռնուեցին: Թարգմանը բացատրեց, ոմանք ասում են, թէ հողի մասին որ և է կարգադրութիւն անելուց առաջ պէտք է տանուտէրին հարցնել, և առանց նորան անկարելի է: Իսկ ոմանք էլ ասում են— առանց նորան էլ եօլայ կերթայ:

9.

Բաշկերցիք վիճում են, յանկարծ աղուէտի փափախով մէկը մօտեցաւ: Բոլորը լռեցին և կանգնեցին: Թարգմանն ասում է. այդ ինքը տանուտէրն է: Պախումը անմիջապէս գտնում է ամենալաւ կապացուն և տանուտէրին մատուցանում, հետն էլ 5 զրովանքայ թէյ:— Տանուտէրն ընծաները ընդունում է և նստում առաջին տեղը: Բաշկերցիք իսկոյն սկսում են ինչ որ բաներ ասել նորան: Տանուտէրը լսում է, լսում, գլխով նշան է անում, որ նօքա լռեն, և սկսում է Պախումին ռուսերէն ասել:

— Այլինչ, ասում է տանուտէրը, կարելի է: Աբրընու, որ տեղ սերտդ ուղում է: Հողը շատ է:

«Ինչպէս ես կարող եմ, որքան կամենամ վերցնեմ, մտածում է Պախումը: Ի՛նչ հարկաւոր է, ինչ ուղում է լինի, հաստատել: Թէ չէ կասեն քոնն է, իսկ յետոյ կը խլեն»:

— Շատ շնորհակալ ենք, ասում է Պախումը, ձեր բարեացակամութեան համար: Գիտեմ որ դուք հող շատ ունէք, բայց ինձ քիչ է հարկաւոր: Ինձ միայն հետաքրքրում է իմանալ, որ մասն է իմը լինելու: Հարկաւոր է հօ մի կերպ չափել և իմ անունով հաստատել: Թէ չէ մարդուս կեանքը

Աստուծոյ ձեռքն է: Այսօր կանք, վաղը ոչ: Գուք բարի մարդիկ էք, տալիս էք, բայց կըզայ ժամանակ՝ ձեր սրտերը կը խլին:

— Ճիշտ ես ասում, հաւանութիւն է տալիս Պախոմի ասածին տանուտէրը, հաստատելը գրգռուար բան չէ:

Պախոմը շարունակեց.—Այ՛ օրինակ, ես լսեցի, ձեր մօտ մի վաճառական է եղել: Նրան էլ էք դուք հողի կտոր պարգևել, պայմանագրեր կազմել. նոյնը ես կուզէի:

Տանուտէրը ամէն բան հասկացաւ:

— Այդ բոլորը կարելի է, ասում է: Մենք գրագիր էլ ունենք, քաղաք էլ կը գնանք և բոլոր անհրաժեշտ թղթերն էլ կը կնքենք:

— Հապա գինն ի՞նչ է լինելու, հարցնում է Պախոմը:

— Մեր երկրում հողի գինը յայտնի է. օրը 1000 ըուբլի:

Պախոմը չհասկացաւ.—Այդ օր ասած բանը ի՞նչ չափ է, որքան գետնատին է տանում:

— Մենք այդ ասում է տանուտէրը, չենք կարող հաշուել: Միայն մենք հողը օրով ենք ծախում. մի օրում որքան մեծ շրջան անես, քեզ լինի, իսկ օրուայ գինը 1000 ըուբլի է:

Պախոմը դարմացաւ.—Ախր այդպէս չի կարելի, ասում է Պախոմը, մի օրում շատ մեծ շրջան կարելի է անել:

Տանուտէրը ժպտաց.—Բոլորը քոնը կը լինի: Միայն մի պայման ունենք. եթէ մի օրում յետ չէկար այնտեղ, որտեղից վերցնես,—փողերդ կորչելու են:

— Ի՞նչպէս նշան անեմ, ասում է Պախոմը, թէ որտեղով եմ անցել:

— Մենք կը մնանք քո ընտրած տեղում. որտեղ սիրող կամենայ, մենք կը կանգնենք, իսկ դու գնա՛, շրջան արա. հետդ բաճ վերցրու և որտեղ հարկաւոր կը լինի նշան արա, անկիւններում փոս փորեր, չմեր գեր, յետոյ մի փոսից միւսը գուժան կանցկացնենք: Ինչ շրջան ուզում ես, արա՛, միայն մինչև արեւի մայր մտնելը արի՛ այնտեղ, որտեղից սկսել ես: Ինչքան անցնես—բոլորը քոնը:

Պախոմը ուրախացաւ: Որոշեցին առաւօտը վաղ վեր կենալ: Գատարկաբանութիւններ արին, երկար ու բարակ գլխներեց դուրս տուին, մի քեչ կումիս լամպին, ոչխարի միս կերան, մի անդամ էլ թէյ լամպին: Գիշեր դարձաւ: Պախոմին բմբէ անկողնի մէջ պարկեցրին, և բաշկերցեց ցրուեցին: Խօսք տուին միւս օրը արշալոյսին հաւաքուել, մինչև արեգակի ծագելը նշանակած տեղը հասնել:

է.

Պախումբ պարկեց բմբլէ անկողնի մէջ, բայց քունը չէր տանում, ուշ ու միտքը հողով էր գրաւած:

«Կը թռցնեմ, մտածում է, մեծ կտոր: Մի օրուայ մէջ 50 վերստ կը պտտեմ: Այժմ տարի է օրը: 50 վերստի մէջ հող կը լինի հմ: Որը մի քիչ վատ կը լինի, կարող եմ ծախել, կամ գիւղացւոց վերայ թողնել, իսկ լաւ կտորը կընտրեմ և նրա վերայ բնակութիւնս կը հաստատեմ: Լծկաններ կը պահեմ երկու գուլթան դուրս բերելու համար, երկու մշակ կը վարձեմ. 50 դեսետափնի չափ կը հերկեմ, իսկ մնացածի վերայ անասուններս կը թռչկոտան»:

Ամբողջ գիշեր Պախումբ աչք չը կպցրեց: Արշալուսից առաջ միայն թմրութիւն եկաւ վրան: Թմրութեան մէջ ընկնելն ու երազ տեսները մէկ եղաւ: Տեսնում է, որպէս թէ հէնց այն կիբեփկայի տակ էլ պարկած է, և լսում է, որ դրսում մէկը բարձրաձայն կչկչալով ծիծաղում է: Որպէս թէ ապա ցանկացաւ տեսնել, ով է այդպէս ծիծաղողը, վեր կացաւ, կիբեփկայից դուրս եկաւ ու տեսնում է,—կիբեփկայի առաջ նստել է նոյն այն

բաշկիրցւոց տանուտէրը, երկու ձեռքով բռնել է փորը, օրօրուում ու ինչ որ բանի վերայ ծիծաղում է:—Պախումբ մօտեցաւ և հարցրեց. «Ինչո՞ւ ես ծիծաղում: Եւ նկատում է, որպէս թէ, դա ոչ թէ բաշկիրցւոց տանուտէրն է, այլ այն վաճառահանը, որ այդ քանի օրը նրանց մօտ էր վեր եկել, հողի մասին պատմել: Գարձաւ վաճառահանին հարցրեց միայն. «Վաղո՞ւց է դու այտտեղ ես»: Բայց արդէն դա վաճառահանը չէր, այլ այն գիւղացին, որ հին ժամանակ ցածից եկել էր: Պախումբ տեսնում է որպէս թէ, դա ոչ էլ գիւղացին է, այլ ինքը սատանան է՝ եղջիւրներով և սմբակներով, նստած կչկչում է, իսկ նրա առաջ պարկած է մետակ շապիկ հագին, ստաբուրիկ մի մարդ: Գռացաւ Պախումբ, աւելի ուշագիւր կերպով նայեց՝ իմանալու համար, թէ ի՞նչ մարդ է պարկողը: Եւ տեսնում է, որ մարդը մեռած է և որ նա ինքը Պախումբն էր: Պախումբ զարհուրեց և զարթնեց: Զարթնեց,—«Ի՞նչ երազներ եմ տեսնում», մտածում է: Նայեց, բաց դռնից տեսաւ, որ սպիտակին է ապիւս, սկսում է լուսանալ: «Հարկաւոր է, մտածում է Պախումբ, բաշկիրցւոց զարթնեցնել, գնալու ժամանակն է»: Պախումբ վերկացաւ, տարանտատում պարկած ծառային զարթեցրեց, հրամայեց ձիաները լծել, և գնաց միւսներն զարթեցնելու:—«Ժամանակն է, ատում է Պախումբ, դաշտ գնալ, չափել: Մէկը միւսի ե-

տակց վերկացան բաշկերցիք, ամէնքը հաւաքուեցին, սամուտէրն էլ եկաւ: Բաշկերցիք նորից սկսեցին կումիս խմել, ցանկացան Պախումին էլ թէյով հիւրասիրել, բայց նա չը համբերեց: «Եթէ գնալու ենք, գնանք, ասում է Պախումը, ժամանակն է»:

Ը.

Բաշկերցիք հաւաքուեցին, ով ձի ունէր նըստեց, իսկ միւսները տարանտաների մէջ տեղաւորուեցին, ճանապարհ ընկան: Պախումն էլ ծառայի հետ իւր տարանտասը նստեց, հետները բան վերցրին: Գաշտ հատան, արշալոյս էր: Բարձրացան մի բլրակի—բաշկերցւոց լեզուով շիխանի՝ վերայ: Տարանտաներից դուրս թափուեցին, ձիաներից իջան, կիտուեցին միմեանց գլխի: Տանուտէրը մօտեցաւ Պախումին, ձեռքով ցոյց տուեց:

— Ահաւասիկ, ասում է, բոլորը մերն է, ինչ որ աչքդ կտրի: Ընտրի՛ր սրտիդ ուղած կտորը:

Պախումի աչքերը վառուեցին. տեսնում է, որ ամբողջ հողը պարարտ, պարկած, ձեռքի ավիկ նման հարթ, կահաշի նման սև, իսկ փոս տեղերն էլ—այնպէս սիզաւէտ է, որ խոտը մինչև մարդի կուրծքն է անցնում:

Տանուտէրը աղուէտի գլխարկը հանեց, ցած դրեց:

— Ա՛յ, ասում է, թող սա նշան լինի: Այստեղից գնա՛, այստեղ արի: Ինչ շրջան անես—քոնը լինի:

Պախումը փողերը հանեց, գլխարկի վերայ դրեց. կապէն հանեց, մնաց մի բաճկոնով, գօտին փորի տակով լաւ պնդացրեց, ձգուեց, հացի պարկը թևի տակ դրեց, ջրի փոքրիկ դաւը գօտիկից կահեց, քաշեց ծուղիքը, ծառայի ձեռքից առաւ բահը, ճանապարհ ընկաւ: Մտածեց, մտածեց, ո՛ր կողմը բռնի—բոլորը լաւ է: Մտածում է՝ մի և նոյն է, գնամ դէպի արևելք: Երեսը դէպի արևն արաւ, ճլրքոտաց, սպասում է, մինչև որ երկրի այն երեսից կերևար: Մտածում է—չեմ բաց թողնի ոչ մի ըոպէ: Հովին գնալն աւելի հեշտ է: Հէնց որ ծածկուած տեղից սփռուեցին արեգակի առաջին ճառագայթները, Պախումը բահը ուսը դրեց, ընկաւ ճանապարհ դէպի հարթ տափաստանները:

Պախումը գնում էր ոչ շատ հանդարտ, ոչ էլ շտապ, այլ միջակ քայլերով: Մի վերտառչափ անցաւ. կանգ առաւ, փոս փորեց և դուրս եկած կոշտերը միմեանց վերայ դրեց, որ նշանը աւելի նկատելի լինէր: Գնաց, գնաց, սկսեց ճմլկոտալ, քայլերն արագացնել: Գարձեալ բաւական անցաւ, էլի փոս փորեց, ուրիշ փոս արաւ:

Պախտմը յետ նայեց: Արեգակի լուսով շի-
խանը լաւ էր երևում, ժողովուրդը կանգնած
էր, տարանտանների ակները օդերը փայլում էին:
Պախտմը ենթադրում է, որ հինգ վերստաչափ ան-
ցած կը լինի: Մարմինը տաքանալ սկսեց, բաձկո-
նակն էլ հանեց, ուսերին ձգեց, շարունակեց ճա-
նապարհը: Շոգն ընկաւ: Արեւին նայեց, — արդէն
նախաձաշի ժամանակն էր:

«Մի շունչն անցած է, մտածում է Պախտմը,
իսկ օրը չորս շունչ ունի, դեռ շուտ է թեքուե-
լուն: Արև մի բոբկանամ»: Պանգ առաւ, մի քիչ
աւելի մեծ փոս արաւ, չմերը միմեանց վերայ
դրեց, դաւն արձակեց, ծարաւը հագեցրեց և
ուղիղ դէպի ձախ դարձաւ: Գնաց, գնաց, սկը-
սուեց բարձր խոտը, սաստիկ շոգեց:

Պախտմը կտմաց կամաց յողնածուծիւն
զգաց. արեւին նայեց, տեսնում է՝ ուղիղ կէսօր
է: — «Է՛, մտածում է, հարկաւոր է հանգստա-
նալ»: Պախտմը կանգ առաւ, նստեց: Մի քիչ հաց
կերաւ, ջուր խմեց, բայց չուղեց պարկել. մտա-
ծում է — ես գիտեմ, պարկելս ու քնելս մէկ կը
լինի: Մի քիչ ժամանակ նստեց, ապա ճանապար-
հը շարունակեց: Սկզբում լաւ էր գնում, թեթեւ
քայլով էր շարժուում: Կերակրից ուժեքն աւե-
լացել էին: Ահա սկսեց սաստիկ շոգել, քունն էլ
տանում էր, սակայն անդադար գնում է, մտա-
ծում. համբերութիւնը կեանք է:

Դարձեալ շարունակեց այդ կողմով առաջ
գնալ, կամեցաւ արդէն ձախ թեքուել, բայց
տեսնում է — ջրարբի հովիտ. աիտոսում է թող-
նելը: Մտածում է՝ այդտեղ կանեմ լաւ կը բուս-
նի: Դարձեալ շարունակում է ուղիղ ճանապար-
հը: Հովիտը վերցրեց, հովիտ ծայրում փոս փո-
րեց, երկրորդ անկիւնը կաղմեց: Պախտմը յետ
նայեց դէպի շիխանի կողմը, տալիս շուրջը պըտ-
տել, մէջտեղն էր եկել. մի ինչ որ բան ճօճում
էր օդում և թանձր մառախուղի միջից հագիւ-
նշմարուում էին շիխանի մարդիկ: — «Է՛, մտա-
ծում է Պախտմը, միւս կողմերը շատ երկար վեր-
ցրի, այս հարկաւոր է մի քիչ կարճեցնել»: Եր-
րորդ կողմը շարունակեց անցնել, սկսեց քայլերն
աւելացնել: Արեգակին նայեց — օրը կէս է լինում,
իսկ երրորդ կողմից ընդամէնը դեռ երկու վերստ
էր անցել: Եւ մինչև տեղը նոյն 15 վերստն էր:
— «Ա՛յ, մտածում է, կալուածքս թէև ծուռն է
լինում, բայց անհրաժեշտ է ուղիղ անցնել: Աւե-
լորդ հարկաւոր չէ վերցնել: Առանց այն էլ հողը
շատ է»: Պախտմը շտապով փոս արաւ, և ուղիղ
քայլերով դէպի շիխանը գիմեց:

թ.

Պախտմը գնում է ուղիղ շխտանի վերայ, բայց սկսել էր արդէն ծանրանալ: Քրանքից ջուր էր կարուել, բոբիկ ոսները քրքրուել էին ու ջարդուել, սկսել էին դանդաղել: Հանգստանալ է ուզում, բայց անկարող է, մինչև արևի մայր մտնելը չէր հասնի: Չի սպասում արեգակը, անդադար իջնում ու իջնում է: — «Ա՛խ, մտածում է, արդեօք չը սխալուեցի, շատ չը վերցրի՛: Հը՞. եթէ չը կարողանամ հասնել»: Առջևում ընկած շխտանին է նայում, արեգակին նայում. մինչև տեղը դեռ հեռու է, բայց արեգակը մօտենում է մայր մտնելուն:

Պախտմը գնում էր այդպիսով, դժուար դժբութեան մէջ էր, բայց անդադար աւելացնում ու աւելացնում էր քայլերը: Գնում էր, գնում — բայց տեղը դեռ հեռու էր. սկսում է վազել: Բաճկոնակը մի կողմ է ձգում, շարտում է կոշիկները, դաւը. ձգում է դլխարկը, բահն է միայն պահում, որի վերայ և յենուում է: — «Ա՛խ մտածում է Պախտմը, աղահուծիւն արի և ամբողջ գործը փչացրի՛ արևի մայր մտնելուց առաջ չեմ հասնի»: Եւ աւելի շնչատպառ է լինում երկու-

ղից: Պախտմը վազում է, քրտինքից շապիկն ու վարտիկը մարմնին են կպչում, բերանը չորանում է: Աուրծքը ուռչում է փուքսի նման, իսկ սիրտը խիում մըճի պէս. ոսները կարծես իրենը չը լինեն, ծալծլուում են: Պախտմի դժուարն է դալիս, վախենում է չը արաքուի յանկարծ սաստիկ լարուածութիւնից:

Մահից վախենում է, բայց կանգնել չէ կարող: «Այսքան տեղը վազեցի, մտածում է Պախտմը, իսկ այժմ կանգնել, — յիմարի տեղ պիտի գնեն ինձ»: Աաղեց, վազեց, մօտենում է արդէն և լսում. բաշկերցիք ճշում, հարայ են կանչում, և նոյա աղաղակից Պախտմի սիրտն աւելի է ալեկոծում: Աերջին ուժերը հաւաքած, Պախտմը վազում է, իսկ արեգակն արդէն իւր մուտքին է մօտենում, մթութեան մէջ մանում. դարձել էր մի կարմիր, արնադոյն բան: Հա—հա մտնելու վերայ է: Արեգակը մտնելու մօտ է, բայց մինչև տեղ հասնելն էլ շատ հեռու չէր: Պախտմն արդէն տեսնում է, որ ժողովուրդը կանգնած է շխտանի վերայ, նրան ձեռքերով է անում, խրախուսում է: Գետնի վերայ աղբէսի փափախն է դրուած, նրա մէջ փողերը, իսկ գլխարկից ոչ հեռու տեսնում է տանուաէրին, — ինչպէս նա հողի վերայ նստել է և ձեռքերով փորը բռնել: Պախտմը երազը յիշեց: — «Հողը, մտածում է Պախտմը, շատ է, բայց կը տայ Աստուած, որ նորա վերայ ապ-

րեմ: Օ՛րս, խորտակեցի ես իմ ձեռքով իմ կեանքը, մտածում է: Զեմ հասնի:

Պախումը արեգակին նայեց, բայց նա արդէն մօտեցել էր երկրին, արդէն մի ծայրը երկրի ետևն էր անցել և անկիւնով ուղիղ կտրուել: Պախումը հաւաքեց իւր վերջին ուժերը, մարմինը առաջ ձգեց, ոտները հաղիւ հաղ գէմ էր տալիս, որ չընկնի: Պախումը մօտենում է շիխանին, յանկարծ մթնկալում է: Նայում է, արեգակն արդէն մտել է: Պախումը ծանր ակ քաշեց:— «Պորմն, մտածում է Պախումը, իմ աշխատութիւններս»: Արդէն կամենում էր կանգ առնել, երբ լսում է, որ բաշկիրցիք անդադար շարունակում են հարայ կանչել, և յանկարծ միտքն է գալիս, որ ցածից նրան թռուում է, թէ արեգակը մտել է, բայց շիխանից դեռ ոչ: Պախումը հաւաքեց իւր վերջին շունչը բարձրացաւ շիխանի վերայ: Շիխանի վերայ դեռ լոյս էր: Պախումը հեալով հասաւ, տեսնում է գլխարկը: Գլխարկի դիմաց նստել է տանուտէրը, կշկշում է և ձեռքերով փորը բռնում: Պախումը երազը յիշեց, ակ քաշեց, ոտները դետնից կախ ընկան, և երեսի վերայ վառուեց Պախումը գետին, ձեռքերը գլխարկին հասան:

— Այ կեցցես. աղազակեց տանուտէրը: Տէր դարձար շատ հողերի:

Պախումի ծառան մօտեցաւ, կամեցաւ տիրոջը գետնից կտրել. տեսնում է, որ Պա-

խումի բերանից արիւն է հոսում, և մեռած պարկած է:

Ծառան բահը վերցրեց, Պախումի համար, որքան նրան գլխից մինչև ոտները պէտք էր—երեք արշին գերեզման փորեց, և Պախումին թաղեց:



Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.

Multiple lines of handwritten text in Armenian script, also appearing as bleed-through from the reverse side.



«Ազգային գրադարան»



NL0325135

14.171

ԳԻՆՆ Է Տ ԿՈՊԵԿ